

Եկեղեցին չափանիշը դուն ես: Քեզմէ  
լաւագոյն չէ եկեղեցին, եւ ոչ ալ քեզմէ  
յոռեգոյն: Ինչ որ ես դուն այսօր, նոյնն  
է եկեղեցիդ:

Դուն բարեպաշտ հաւատացեա՞լ  
մըն ես - եկեղեցիդ ալ նոյնն է:  
Հարուստ ես դուն հոգիով - եկեղեցիդ

ալ հարուստ է: Քեզմով պիտի  
պայմանաւորուի եկեղեցին ամրողը  
կեանքը: Դուն անհատ մը չես եկեղեցին  
մէջ. դուն ամրողը եկեղեցին ես, թէ եւ  
անհատ մը:

Վեր. Ա.Ա. ՊԵՏԻԿԵԱՆ

Հ. Մարտիրոս Աբենդուն, Մանուկյան  
Հ. Վահագան Կոմակյանին  
Հ. Վահագան Կոմակյանին

ՀԱՅՈՒՆԱՆ ՍՈՐՈՅԱՆ ԽՈՐՈՋԱԿԱՐԱՅԻ ԽՈՐՈՋԱԿԱՐԱՅԻ  
ԶԱՐՈՒՀԱՄ ՏՊԱՐ ՊԱՅՐԱՍԱՐԱՅԻ  
ԽՈՐՈՋԱԿԱՐԱՅԻ

## ԾՆՈՐՀԱԽՈՐԱՆՔ

**Ա. Զատկուան առիբով, շնորհաւորամիի գիրեր եւ հեռագրեր առաքուեցան  
Հոգեւոր ու Կառավարական պետերուն եւ Առաջնորդներուն, որոնց շնորհաւորագրերը  
ստացած է Պատրիարք Սրբազն Հայրը:-**

- Ամենայն Հայոց Հայրապետ, Նորին Ա. Օծուբիւն Տ. Տ. Գարեգին Բ.  
Կարողիկոսէն.


- Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ, Ն. Ա. Օ. Տ. Տ. Արամ Ա.  
Կարողիկոսէն.

- Թուրքիոյ Հայոց Ամեն. Տ. Մեսրոպ Բ. Մուրաֆեան Սրբազն Պատրիարքէն.

- Մուկուայի եւ Ռուսիոյ Օրբոտոքս Եկեղեցւոյ Ամեն. Տ. Ալէքսէյ Բ.  
Սրբազն Պատրիարքէն.

- Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութեան նախագահ Տիար Մարքին  
Եսայեանէն.

- Թեմակալ Առաջնորդներէն, Պետական եւ Ազգային Հաստատութեանց  
ղեկավարներէն:



ԵԱՅՐԱՎՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ՄԱՅՐ ԱԹՈՈՒ Ս. ԷՇՄԱՎՈՒՆ



SUPREME PATRIARCH  
CATHOLICOS  
OF ALL ARMENIANS  
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Թիվ 467

Սուլը Զատիկ, 2007 թ.

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ

Տ. ԹՈՐԳՈՒ ԱՐՔԵՊԻԿՈՊՈՍ ՄԱՍԻՒԿՅԱՆ  
ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ  
Երուսաղեմ, Իսրայէլ

Ամենապատիվ Սրբազան Պատրիարք,

Միաժնական Մայր Աթոռ Սուլը Էջմիածնից Մեր ողջույնն ու  
շնորհավորանքներն ենք հոգում Ձեզ, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության  
ուխտապահ միաբանությանը մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Սուլը Հարության  
բերկրալի տոնի առիթով։

Այսօր Վերստին ավետում ենք Տիրոջ Հաղթական և Հրաշափառ Հարությունը,  
որով Փրկիչն Աստված «կործանեց մահը և լուսաւոր դարձրեց կեանքն ու  
անմահութիւնը Աւետարանի միջոցով» (Բ Տիմ. 1.10):

Տերունական կենսապարզ Հարության սքանչելագործ և շնորհարաշխ տոնի  
ուրախությունը մեր հոգիներում՝ գոհություն ենք հայտնում Հարուցյալ մեր Տիրոջը,  
որ աստվածային երկնառաջ օրինության ներք արգասաքեր է հայոց հավատքը՝  
հոգևոր վերազարդումից նոր պտուղներն են առատանում ազգային-եկեղեցական  
մեր կյանքում, և Հարուցյալի կենարար շնորհների ժառանգորդ ազգս հայոց ի  
Հայրենիս և ի սփյուռք միասնական ջանքեր է ներդնում Հայրենիքի բարորության,  
մեր Սայր Եկեղեցու պայծառության և համազգային առաջընթացի համար։

Ամենապատիվ Սրբազան Պատրիարք, մաղթում ենք Հարուցյալ  
Աստվածորդու հանապազ օրինությունն ու հովանին Ձեզ, Երուսաղեմի Տիրախնամ  
Հայոց Պատրիարքության հոգևոր սպասավորներին և հավատավոր մեր  
զավակներին։

Աղօթում ենք, որ Տերունական Սուլը վայրերում խաղաղության մեջ  
աստվածապարզ հաջողություններով բարեզարդվի Ձեր առաջելությունն ու հոգևոր  
ծառայության վաստակը, որպեսզի Ձեր առաջնորդության ներքո Երուսաղեմի  
Հայոց Պատրիարքությունը շեն ու բարգավաճ լինի՝ ի փառ Աստծո, ի  
պայծառություն Առաքելական մեր Սուլը Եկեղեցու։

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՆ Ի ՄԵՌԵԼՈՅ,  
ՕՐՅՆԵԱՆ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Եղբայրական սիրո ողջունիվ,  
աղոթակից՝

ԳԱՐԵԳԻՆ Բ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



# ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ

## ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿՐԼԻԿՐՈՅ

ԱՆԹԻՒՐՈՒ - ՀԻՋԱՆԱՆ

Թիւ 13/07...

ԱԷՐԻՒՅԱՆ, Ս. Զատիկի, 2007

Ամենապատիւ  
Տ. Թորգոմ Արքեպսկ. Մանուկեան  
Հայ Պատրիարք Երուսաղէմի  
Երուսաղէմ.

Սիրեցեալ եղբայր ի Քրիստոս.


Հոգեւոր ցնծութեամբ կը դիմաւորենք Քրիստոսի հրաշափառ Յարութիւնը, ի Հայատան եւ ի սփիւս աշխարհի, որպէս Աստուծոյ Որդուոյն հաւատացող առաջին ժողովուրդը: Քրիստոսի Յարութեան տօնակատարութիւնը կ'ամրացնէ մեր յոյսը Քրիստոսի Երկրորդ Գալստեան, որ կը կազմէ Քրիստոնեական կծանքին առանցքը: Արդարեւ, այս յոյսով հզօրացած Եկեղեցին այս աշխարհին վրայ կ'ապրի ու կը պայմարի, կը վկայէ ու կը բարողէ:

Մեր ժողովուրդը նոյն այս յոյսով ապրած ստեղծագործած ու նահատակուած է դարեր շարունակ: Այլապէս, ինչպէս կարելի է ըմրոնել պատմութեան արհաւիրքներուն դիմաց մեր ժողովուրդին գոյատեւելու հաւատքը ու կամքը: Այսօր, ներկայ աշխարհի նեղութիւններուն ու չարիքներուն դիմաց, երբ մեր ժողովուրդի զաւակները եւս կը դիմագրաւեն անորոշաւթեան ու յուսահատութեան պահեր, Յարուցեալ Քրիստոս դարձեալ կ'ըսէ մեզի՝ մի՛ վախնաք, յոյսով ապրեցէ՛ք, որովհետեւ ես ծեզի հետ եմ (Ղուկ. 24: 36, Մատթ. 28: 20):

Արդ, յարուցեալ Փրկչին պատգամով զօրացած, պէտք է ողջունենք մեր ժողովուրդին սիրելի զաւակները ամեն տեղ, որպէս Առաքեալին բացատրութեամբ, "նեպանները" Քրիստոսի (Նիւս. 6: 20):

Քրիստոսի հրաշափառ Յարութիւն տօնին առիրով նոյն յոյսով կ'ողջունենք Զերդ Ամենապատուուրիւնը: Մեր աղօքքն է առ Աստուծած, որ Զեզի պարգեւեն նորանոր իրագործումներով երկար ու բեղուն գահակալութիւն:

Եղրայրական սիրոյ ջերմ ողջունիւ.

Աղօքակից  
  
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿՐԼԻԿՐՈՅ



ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՈՑ  
ՍՏԱՄՊՈՒՆ

ERmeni  
PATRİKLİĞİ  
İSTANBUL

ARMENIAN  
Patriarchate  
ISTANBUL

Արքունիկոն Առաքելական Կոնգրեսուն հայոց պատրիարքության կողմէ առաջնորդությունը և պահպանությունը կազմութեած է Առաքելական պատրիարքության հայոց պատրիարքության կողմէ:

8 Ապրիլ 2007

Ն.Ա.Տ. Թորգոմ Բ.  
Պատրիարք Հայ Երուսաղեմի  
Ս. Երուսաղեմ - Խսրայել

Սիրելի Պատրիարք Հայր,

«Որպեսզի ճանչնամ զԱյն ու Անոր Յարութեան գօրութիւնը, Եւ մասնակից ըլլամ  
Անոր չաշշաբանըներուն, կերպարանակից՝ Անոր մահուան, որպեսզի այս կերպով  
հասնիմ  
մեռելսերեւ յարութիւն առնելու» (Փիլիպեցիք 3.10,11):

«Քրիստոսը ճանչնալ, Անոր Յարութեան գօրութիւնը ճանչնալ կը փափաքիմ»:  
Ահաւասիկ ա՛յս է Ս. Պողոս Առաքեալի փափաքը: Իր կեանքի ընթացքին Ս.  
Պողոսի կեանքին ամենակարեւոր փափաքը այս մեկն էր: Կենդանի, Յարուցեալ  
Քրիստոսը ճանչնալ Եւ անդրադառնալ Անոր հրաշափառ Յարութենեսն բդիսող  
գօրութեան:

Ս. Յարութեան Տօնին առթիւ անգամ մը Եւս կը խորհրդածենք մեր մեղքերուն  
փոխարեւն ինքնինք Խաչին Վրայ զոհաբերող Քրիստոսի՝ մահուան, թաղման եւ  
եռորեայ հրաշափառ Սք. Յարութեան խորհրդներուն Վրայ, Եւ Ս. Պողոս  
Առաքեալին հետ միեւնոյն օրինեալ փափաքը կը կիսենք:

Մեր Տիրոջ Եւ Փրկչին Ս. Յարութեան Տօնին առիթով հաճեցեք ընդունիլ մեր Եւ մեր  
ազգային մարմիններուն շնորհաւորութիւնները Եւ լաւագոյն մաղթանըները:

**ԵՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՆԻ Ի ՄԵՌԵԼՈՏ  
ՕՐՆԵԱՆ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ԵՐԻՍՏՈՍԻ**

Ողջունիւ Եղբայրական սիրոյ Եւ  
աղօթակցութեամբ ի Քրիստոս





Патриарх  
Московский  
и всея Руси

119034 Москва, Чистый пер. 5

ЕГО БЛАЖЕНСТВУ,  
БЛАЖЕННЕЙШЕМУ ТОРКОМУ II,  
АРМЯНСКОМУ ПАТРИАРХУ ИЕРУСАЛИМА

Ваше Блаженство!

В светлые дни ликования о Христе Воскресшем обращаюсь к Вам со словами жизнеутверждающего Пасхального приветствия:

Христос Воскресе!

Ныне, когда “поглощена смерть победою” (Ис. 25, 8), мы в пасхальном веселии “празднуем иного жития, вечного, начало” (Тропарь 7 песни Пасхального канона).

От всей души поздравляю Вас со всерадостным праздником Пасхи Христовой и желаю Вам благословенного мира, крепкого здоровья и помощи от Воскресшего Спасителя в Вашем высоком служении.

С любовью о Христе Воскресшем

ПАТРИАРХ МОСКОВСКИЙ И ВСЕЯ РУСИ

Пасха Христова  
2007 г.  
Москва